

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), տեխնոլոգիայի ուսուցչի (տղաներ) (7 դասաժամ) թափուր տեղերի համար:

Նշված պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. *Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),*
2. *Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 -րդ հոդվածի 1 -ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,*
3. *Անձնագրի պատճենը,*
4. *Ինքնակենսագրություն (Ձև 4),*
5. *Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),*
6. *Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*
7. *Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,*
8. *ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **մայիսի 18-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա, **մայիսի 20-ին**, ժամը 14:00, Սյունիքի մարզի Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում.

հասցե՝ ք. Քաջարան, Աբովյան 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285)-3-21-23, կամ (055)28-11-01 հեռախոսահամարներով: